

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՄ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 142-Լ որոշմամբ ընդունել է «Տնտեսական արձագանքման ծրագիրը և գործողությունների պլանը», որով նախատեսվել են մի շարք տնտեսական ծրագրերի իրագործում, որոնք խնդիր էին դրել իրենց առջև 2020 թվականի մարտից ի վեր Հայաստանում կորոնավիրուսային համավարակի տարածման և սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության հանդեպ սանձազերծած պատերազմի հետևանքով երկրում ի հայտ եկած բացասական շուկերի հաղթահարման ու տնտեսական ճգնաժամի առաջնային արձագանքման օրակարգի ձևավորումը, ինչպես նաև՝ միջնաժամկետում կայուն վերականգնման ու զարգացման համար նոր սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման պահանջի ձևակերպում: Առաջարկվող ծրագրերից մեկը գյուղատնտեսական նոր, բարձր ավելացված արժեք ձևավորող ընտրված մշակաբույսերի աճեցման և վերամշակման համար անհրաժեշտ նախապայմանների ձևավորումն է, որի շրջանակներում առաջարկվում է գյուղատնտեսական նոր ընտրված մշակաբույսերի (օր.՝ Industrial Hemp) աճեցման և հետագայում վերամշակման նպատակով ապահովել դրանց մշակության գործընթացը մեկնարկելու համար անհրաժեշտ իրավական հիմքերը, անհրաժեշտ հումքը և կարողությունները:

Արդյունաբերական կանեփը եղել է մանրաթելերի և յուղի արտադրության աղբյուր, որն օգտագործվում է՝ արտադրական և սպառողական բազմազան ապրանքատեսակների արտադրության համար: Կանեփի օգտագործման համաշխարհային շուկան բաղկացած է ավելի քան 25,000 ապրանքատեսակից 9 ենթաշուկաներում՝ գյուղատնտեսություն, տեքստիլ, վերամշակում, ավտոմոբիլային արտադրություն, կահույք, թուղթ, շինանյութ և խնամքի պարագաներ: Գյուղատնտեսական շրջանառությունից դուրս եկած հողերի, մասնավորապես հողերի բերրիության նվազման, որակական ցուցանիշների կորստի, ծանր մետաղներով,

ռադիոակտիվ նյութերով աղտոտվածության դեպքում արտադրական կանեփի մշակությունը արդյունավետ է հողի որակի բարելավման նպատակով:

ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65 որոշմամբ ընդունված Կառավարության ծրագրում, մասնավորապես 5.10 կետում, նշված է՝ «Կառավարությունն անթույլատրելի է համարում, որ գյուղատնտեսական նշանակության հողերի շուրջ 1/3-ը մնացել է անմշակ և Կառավարությունը գործուն քայլեր է ձեռնարկելու չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ»:

Հայաստանի գյուղատնտեսական հողերի շուրջ $\frac{1}{3}$ -ը գտնվում է անմշակ վիճակում, և Հայաստանում թույլատրելի կանեփի արտադրությունը միաժամանակ փորձ է արվում զարկ տալ գյուղատնտեսության զարգացմանը, օգտագործել տնտեսության զարգացմանն ուղղված բոլոր ռեսուրսները: Հողերի մշակումը ոչ միայն լայն իմաստով կխթանի գյուղատնտեսության ոլորտը և նոր շունչ կհաղորդի երկրի տնտեսությանը, այլ նաև էական նշանակություն կունենա առանձին շրջանակի անձանց կենսապայմանները բարելավելու համար: Մասնավորապես, կանեփի արտադրությունը՝ որպես բիզնեսի նոր ենթաճյուղ զարգացնելով, կստեղծվեն բազմաթիվ նոր աշխատատեղեր այնպիսի վայրերում, որտեղ մշտապես առկա է տեղի բնակչությանն աշխատանքով (եկամտով) ապահովելու խնդիր: Այսպիսով, Հայաստանի անմշակ հողերի $\frac{1}{3}$ -րդ-ի կամ թեկուզ դրա մի մասի օգտագործումը կանեփի արտադրությունը կազմակերպելու նպատակով կլուծի ինչպես համակարգային, այնպես էլ մասնավոր խնդիրներ:

ԵՄ տարածքում կանեփի մշակությամբ զբաղվում են 21 երկրներում, որտեղ կանեփի ցանքատարածությունը 2011 թվականին կազմել է 8,000 հա, իսկ 2017 թվականին եռակի չափով ընդլայնվել է՝ զբաղեցնելով 42,500 հա: Ընդ որում՝ 1 հա տեխնիկական կանեփի վերամշակումից կարելի է ստանալ միջինը 75-210լ CBD յուղ, 6010կգ ծղոտ, որը կարող է վերածվել մոտավորապես 1,475կգ մանրաթելի:

Հաշվի առնելով կանեփի արտադրության օրինականացման արդյունքում ստեղծվող լայնածավալ հնարավորությունները և ոլորտի՝ տնտեսվարող սուբյեկտների համար նոր լինելը՝ անհրաժեշտ է դաշտը ենթարկել մանրամասն իրավական կարգավորման: Այդպիսի կարգավորման մեխանիզմներից է լիազորված մարմնի կողմից լիցենզիայի տրամադրումը և վերահսկողական գործառույթների արդյունավետ իրականացումը:

Շուրջ 15 երկրի կարգավորումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ անկախ տարբեր երկներում սահմանված օրենսդրական առանձնահատկություններից կան մի շարք նմանություններ, մասնավորապես ոլորտը լիցենզավորվող է, իսկ լիցենզիան ստանալու համար պարտադիր պայման է, որ դիմողը խախտած չլինի տվյալ երկրի՝ թմրամիջոցներին վերաբերող կարգավորումները, թույլատրվում է վերամշակել միջինում 0,2-0,3% տետրահիդրոկանաբինոլ (THC) պարունակող բույսերը, իսկ չափաքանակը որոշվում է հատուկ փորձաքննություններով: Բոլոր երկրներում կատարվում է ոլորտի վերահսկողություն, ընդ որում, բերքահավաքի իրականացման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը տրվում է պատկան մարմիններին նախապես, իսկ բերքահավաքը մեծամասամբ իրականացնում է պետական մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ:

Արդյունաբերական կանեփի առավելություններից է այն, որ ի տարբերություն շատ մշակաբույսերի, որոնք աճում են միայն խիստ բարենպաստ պայմաններում, կանեփը համարվում է հեշտ մշակվող, դիմացկուն, ամուր, կայուն բերք ապահովող մշակաբույս, որը կարող է լավ հնարավորություն դառնալ գյուղատնտեսությամբ զբաղվողների համար և ունենալով արտադրության տարբեր ուղղություններ՝ աշխատանքի պահանջարկը ոլորտում մեծ սովորաբար մեծ է: Ի տարբերություն սինթետիկ միջոցների, արդյունաբերական կանեփի կարևոր առավելություններից է կենսալուծվող հատկությունը: Արդյունաբերական կանեփից ստացված փայտանյութը շինարարության մեջ համարվում է էժան և որակյալ փոխարինիչ, իսկ կանեփի սերմերից ստացված յուղը, ի տարբերություն մի շարք այլ յուղերի, ունի մեծ քանակությամբ կարևոր ճարպաթթուներ: Միակ մշակաբույսը, որն իր բաղադրությամբ և օգտակար նյութերի պարունակությամբ կարող է մրցակցել կանեփի հետ կտավատն է, որը ևս օգտագործվում է տարբեր արտադրություններում: Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ գյուղատնտեսական շրջանառությունից դուրս եկած հողերի, մասնավորապես հողերի բերրիության նվազման, որակական ցուցանիշների կորստի, ծանր մետաղներով, ռադիոակտիվ նյութերով աղտոտվածության դեպքում արտադրական կանեփի մշակությունը արդյունավետ է հողի որակի բարելավման նպատակով, նպաստում է հողի մեխանիկական հատկությունների բարելավմանը¹, իսկ դիմացկունությունը տարբեր վնասատուների և հիվանդությունների հանդեպ ենթադրում

¹ 2017թ.-ին Լեհաստանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում կանեփի միջոցով հաջողվել է կանգնեցնել էրոզիայի պրոցեսը և հողում վերականգնել միկրոօրգանիզմների կենսագործունեությունը: Ինչպես նաև, կանեփը ձևավորում է առատ կենսազանգված, որը հետագայում հնարավոր է օգտագործել որպես կանաչ պարարտանյութ

է տարատեսակ թունաքիմիկատների նվազագույն օգտագործում, հետևաբար շրջակա միջավայրի և ջրային պաշարների վրա նվազագույն ազդեցություն Բնապահպանական և գյուղատնտեսական նշանակության տեսանկյունից արդյունաբերական կանեփի արտադրությունը նպատակահարմար է, քանի որ՝ վերջինիս օգտագործումը թղթի արտադրության մեջ կարող է էականորեն կրճատել ծառահատումների ծավալը: Կանեփից ստացված թուղթը համարվում է ավելի որակյալ և ամուր:

Միջազգային պարտավորությունների գծով Հայաստանը անդամակցում է Թմրամիջոցների մասին 1961 թվականի միասնական Կոնվենցիային՝ փոփոխված «Թմրամիջոցների մասին 1961 թվականի միասնական կոնվենցիայի փոփոխությունների մասին» 1972 թվականի արձանագրությանը համապատասխան, Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին 1988 թվականի կոնվենցիային:

Մի շարք արտասահմանյան երկրներ արդեն իսկ հաջողությամբ կիրառում են կանեփի արտադրությունը և արդյունավետ կերպով ձևավորել են դրա կարգավորման և վերահսկման իրավական հիմքեր:

Եվրոպական միության տարածքում արդյունաբերական կանեփի վերաբերյալ կարգավորումները մշակված են Միասնական գյուղատնտեսական քաղաքականության շրջանակներում, որով դեռևս 1970-ական թվականներից գյուղատնտեսության ոլորտը դիվերսիֆիկացնելու նպատակով արդյունաբերական կանեփի աճեցումն ու մշակումը սկսեց սուբսիդավորվել: ԵՄ տարածքում գործում է նաև արդյունաբերական կանեփից պատրաստված արտադրանքի փաթեթավորման հատուկ կարգ:

Ֆրանսիայի օրենսդրությամբ արդյունաբերական կանեփի արտադրության ոլորտը լիցենզավորվում է: Լիցենզիան տրամադրվում է Ֆրանսիայի առողջապահության նախարարության կողմից: Թվարկված մյուս երկրների նման, Ֆրանսիայի օրենսդրությամբ նախ սահմանվում են թույլատրելի բուսատեսակները:

Ի տարբերություն այլ երկրների՝ ֆրանսիական օրենսդրությունը հստակ սահմանում է նաև տետրահիդրոկանաբինոլի չափաբաժնի ստուգման ընթացակարգերը, այդ թվում՝ նմուշառումը, վերցվող նմուշների քանակը, դրանց մշակման և չորացման կարգը: Տարբեր է նաև տետրահիդրոկանաբինոլի թույլատրվող չափաբաժինը՝ 0,2 տոկոս:

Իսրայելի կառավարության 2016 թվականի N1587 բանաձևի համաձայն՝ կանեփի բույսի հետ կապված ցանկացած գործողություն, որը ներառում է կանեփի բույսի կամ դրա արտադրանքի աճեցում, արտահանում, տեղափոխում, լաբորատոր փորձարկում կամ հետազոտություն, պետք է համապատասխանի օրենքների

դրույթներին, որը ենթադրում է համապատասխան լիցենզիաների ստացում Վտանգավոր թմրամիջոցների մասին 1973 թվականի օրենքի և վերջինիս 2019 թվականի N16 Փոփոխության համաձայն, ինչպես նաև լիցենզավորման պայմանների պահպանումը:

Իսրայելում բիզնեսի լիցենզավորման ոլորտը կարգավորվում է 1968 թվականի «Բիզնեսների լիցենզավորման մասին» օրենքով: Ներկայումս կանեփի օգտագործումը կարգավորվում է ոչ թե օրենքներով, այլ համապատասխան նախարարությունների կողմից տրված ուղեցույցներով, ընթացակարգերով և շրջաբերականներով: Իսրայելի օրենսդրությունը արգելում է կանեփի օգտագործումը ժամանցի նպատակով, այն համարվում է վտանգավոր թմրամիջոց, որի համար օրենքով պատասխանատվություն է սահմանվում ինչպես ազատագրկման այնպես էլ տուգանքի ձևով: Իսրայելը այս ոլորտում մշակել է համապարփակ էկոհամակարգ, որը գրավում է խոշոր գլոբալ ուշադրություն, ֆոնդեր և մասնագետներ, ինչպես ինչպես նաև կառավարությունների հետաքրքրությունը, ովքեր ցանկանում են իրականացնել նմանատիպ քաղաքականություն: Ներկայումս Իսրայելում կա ավելի քան 460 ագրոտեխնոլոգիական ընկերություն, որոնցից ավելի քան 25% -ը հիմնադրվել է միայն անցած հինգ տարիների ընթացքում:

Ավստրալիայի օրենսդրությամբ նախատեսված է լիցենզավորման և թույլտվության սխեմա, որը կարգավորում է կանեփի բույսերի մշակման և կանեփի և կանեփի խեժի արտադրության հետ կապված հարաբերությունները: Ընդ որում, կանեփի մշակումը և արտադրությունը և դրա հետ կապված գործողությունները նախատեսված են բժշկական նպատակներով կամ բժշկական կանեփի հետ կապված հետազոտությունների համար:

Թմրամիջոցների մասին 1961թ. Կոնվենցիայով սահմանված դեղերի արտադրության համար Ավստրալիայում նախատեսված է առանձին լիցենզավորման և թույլտվության պահանջ և սխեմա: Ավստրալիայում Թմրամիջոցների մասին 1967թ. օրենքի համաձայն կատարվում է հետևյալ երկու տեսակի լիցենզիավորում՝ բուժական կանեփի լիցենզիավորում և կանեփի հետազոտության լիցենզիավորում:

Կանադայում արդյունաբերական կանեփի արտադրությամբ զբաղվելը թույլատրվում է 1994 թվականից, ոլորտը լիցենզավորվող է դարձել սկսած 1998 թվականից: Թույլատրվում է օգտագործել այն բուսատեսակները, որոնցում տետրահիդրոկանաբինոլի չափաբաժինը չի գերազանցում 0,3 տոկոսը:

Կանեփի մասին իրավական ակտի պահանջով մշակվել են արդյունաբերական կանեփի արտադրության, մշակման, ներմուծման և արտահանման վերաբերյալ կարգավորումներ: Կանադայի օրենսդրությամբ սահմանված է մշակվող և աճեցվող թույլատրելի բուսատեսակների ցանկը: Այստեղ բույսն աճեցնողները կարող են քաղել արդյունաբերական կանեփի ծաղիկները, տերևները և ճյուղերը՝ դրանք վաճառելով լիցենզավորված մշակողին:

2. Առաջարկվող կարգավորումների բնույթը

Նախագծերով առաջարկվում է օրենքով թույլատրել արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման գործունեությունը, սահմանել լիցենզավորման առանձնահատկությունները և պարտադիր պահանջները: Մասնավորապես նախագծով առաջարկվում է նախատեսել հետևյալ կարգավորումները.

- Առաջին, սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրական կանեփի արտադրությունը, արհանույնը, ներմուծումը կամ մեծածախ առևտուրը՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:
- Երկրորդ, Նախագծով հստակեցվել է, թե ինչ է իր մեջ ներառում արտադրական կանեփի արտադրությունը,
- Երրորդ, նախագծով նախատեսվել են լիցենզավորման առանձնահատկությունները՝ հստակ կանոնակարգելով այն պարտադիր չափանիշները, որոնք անձը պետք է բավարարի լիցենզիա ստանալու համար, ինչպես նաև սահմանելով որոշ այլ չափանիշներ կառավարության կողմից լիցենզավորման կարգով նախատեսվելու դեպքում:
- Չորրորդ, Նախագծով հստակ սահմանվել է լիցենզավորման ենթակա գործունեության քվոտավորման պահանջ,
- Հինգերորդ, Նախագծով սահմանվել է լիցենզավորված անձանց գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման իրավական կարգավորումները:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ներդնել արդյունաբերական և գյուղատնտեսական նպատակներով կանեփի արտադրության գործունեության իրականացման հնարավորությունը Հայաստանի Հանրապետությունում, լիցենզավորման

առանձնահատկությունները, քվոտավորման պահանջը և պետական վերահսկողության
իրավական կարգավորումը: